այսպիսի նախապատիւ և վաղնջական իրաւունքներու հիմին, կարելի պիտի չ'ըլլար յետոյ, Ժե. կամ ԺԶ. դարերու ընթացքին այս կամ այն կերպով սասունցիին ձեռք բերել հոն և պահել ու չէնքերու տիրանալ։

Արդ, իրականութիւն է թէ այդ ժամանակաշրջանին ուացած ենք հոն եկեղեցի և վերնատուն. միայն Գոմ էլ Աւմեճ կոչումը, որով հանրային ծանօթութեան և պատկան արձանագրութեանց մէջ վաղուց կ'ճանչցուէր մեր նկարագրուած մասունքներուն բարձրագիր մասը, և որուն համար, անտակ մը պատմականացած իրաւունքի սկզբունքով Գաբրիէլ Եպիսկոպոս խնդրեց և ստացաւ զայն մեծապատիւ Մէհմէտ Ալիէն, զայդ կ'հաստատէ անառարկելի։

Կրնայ ըլլալ ասկայն որ, Մէմլուքներու տիրապետութեան վատթարագոյն օրերուն, ատ'նք եւս կորնցուցած ըլլանք, և հարկեցուցիչ պարագաներու մէջ, յետոյ Դպրեվները մեր արամադրութեան տակ դրած ըլլան իրենց Ս. Մինաս եկեղեցիին մէկ մասը։

Ամէն պարագայի մէջ, այս էր կացութիւնը քանի մը տարիէ իվեր, երբ, 1842-ի միջոցներուն, որոշուեցաւ հոս յատկապէս օտարախառն դրութիւններէն, և, յոյժորդ տարին, աւերութիւն Ս. Մինասի վեհապայծառ նոյն կէս մասունքին, և և դուրսը, տեսիլի վերածել, դանուած բացօթեայ համանուն այն սեղանին որ մինչեւ այսօր կ'մնայ առարկայ ընդհանուր բանակռուութեան, չմնացաւ նկարագրել Ս. Մինասայ մասունքը, որ ցարդ է և կ'մնայ իրրեւ եկեղեցի ծառի էլ Խալիկի Հայոց գերեզմանատան։

Անկից կառուցուած է Ս. Աստուածածնին եկեղեցիին ձեւէն ներշնչուած յատակագծի մը վրայ, թէեւ շատ աւելի փոքր, առանց երկուստեք պտեհարանները՝ աւանդատանց և գաւիթի, փոքրիկ վերնատունով մը, ուր կ'երեւան Առաջնորդարան կոչուած մերձակայ չէնքին մէջէն. անշուք զանգակատունով մը, որ հաստատուած է տանիքին հիւսիսային արեւելեան անկիւնին վրայ։ Բացի աստղ դաւէն, ունի զանգակատան նեղքեւ բացուած ուրիշ փոքրիկ դռնակ մը, ուսկից կ'մտնուի խորանին մէջ, սեղանին ետեւը։

Ողովհետեւ չմնացեալ միջոցին, և թուականէն մինչեւ երկոտասնեակ մը տարիներ առաջ, ցանցառ թիւով Հայեր տակաւին կ'բնակէին մերձակայ թաղերուն մէջ, այս մասունքը